ւանայ բանալ ի Գօրիս աւանի եկեղեցական ծխական երկդասեան տղայոց ուսումնարան և հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան վասն այնորիկ ուսումնարանին՝ Բարեկրօն Խորէն քահանայն Մելիք-Դաւայեանց, երեցփոխանն եկեղեցւոյ տեղւոյն և յարգելիք՝ Հայրապետն Բաղրեան և Յովհաննէսն Յարութիւնեան Մկրտչեանց. իսկ ի պաշտօն անձնափոխանորդաց՝ պատուելիք՝ Խաչատուրն Շափաղաթեանց և Մանուչարն Սափեան։

—

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի Ազգիս ի 11 Ապրիլի թ. 160, յանուն Մեծապատիւ Յովսէփ—աղայի Պետրոսեան Ալթունջեանց, վասն նուիրելոյ նորա զՀինգ հարիւր ռուբլ. ի նպաստ ծախուց վերանորոգութեան Տաճարին Ս. Էջմիածնի։

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Ազգիս ի 18 Ապրիլի թ. 164, որով հաստատեցան ի պաշտօն Հոգաբարձութեան վասն եկեղեցական—ծխական երկդասեան օրիորդական ուսումնարանին Հայոց Ս. Աստուածածնին Թանդոյեան եկեղեցւոյ Կուկիոյ Տրփխիս քաղաքի՝ բարեկ. Ներսէս քահ. Ղամազեանց, երեցփոխանն այնր եկեղեցւոյ և պատուելիք՝ Զաքարիայն Գրիգորեան Զաքինեանց և Շաքարն Գուրգէնեան Նուրալեանց. իսկ ի պաշտօն անձնափոխանորդաց Յարգելիք՝ Դարչոն Եսայեան Առաքելանց և Ներսէսն Սարգսեան Յովհաննիսեանց։

ԲԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

19 Մարտի. Երևանի թեմի Փաշալու գիւղի Ստեփաննոս քահանայ Տէր Ստեփաննոսեանը ենթարկուում է երկամեայ ապաշխարութեան եկեղեցու դրանը, 15 ռուբլի տուգանքի յօգուտ Էջմիածնի և 5 ռուբլի տուգանքի յօգուտ Երևանի թեմի քահանայից որբոց և այրեաց գանձանակի։ Այս քահանան

ինքնակամ և առանց թոյլտուութեան մերձաւոր Հոգևոր իշխանութեան պսակել է իւր ծխական Կարապետ Մարտիրոսեանին օրիորդ Նազլու Վարդանեանի հետ, խնամութեան հինգերորդ աստիճանում։ Ս. Սինոդը հրամանագրեց այդ պսակն համարել վաւերական, սակայն ենթարկելով ամուսնացեալներին վեցամսեայ եկեղեցական ապաշխարութեան։

—

19 Մարտի. Ս. Սինոդը հրամայեց լուծուած համարել Երևանի թեմի Մաստարայ գիւղի բնակիչ Յովհաննէս Թունիկեանի և նորա կնոջ Վարթերի Յարութիւնեանց Թունիկեանի պսակը։ Յովհաննէս Թունիկեանը՝ քահանայի ներկայութեամբ պաշտօնական բժիշկների քննութեամբ համարուել է բոլորովին անընդունակ ամուսնական կեանքի, մինչդեռ կինը—առանց սեռական պակասութեան, ամուսնական պարտաւորութեանց կատարման ընդունակ և տակաւին ի կուսութեան։ Ս. Սինոդը այս պսակը լուծուած է համարում ըստ Տէրութեան օրինաց յօդ. 45, հատ. Ժ. մասն ա. և ըստ եկեղեցական կանոնաց Մխիթար Գօշի գլ. Ե. «Եթէ պատահի ամուսնութեամբ ոչ տիրել կնոջ առն՝ դատաստան լիցի բաժանման, լինելն առն այլում»։ Թոյլատրուում է արձակուած կնոջը ամուսնանալ ուրիշի հետ։

—

19 Մարտի. Երնջակի Ս. Կարապետ վանքի վանահայր կարգուեց, ըստ հրամանի Ս. Սինոդի, նոյն վանքի միաբան բարեշնորհ Միքայէլ աբեղայ Տէր Մինասեանցը, պարտաւորուելով տարեկան 500 ռուբլի ներկայացնել յօգուտ Հոգևոր Ճեմարանի, վանական արդիւնքներից։

—

21 Մարտի. Թիֆլիզի բնակիչ Միքայէլ Յովհաննիսեան Պողոսեան Աւագեանց թողնելով իւր կին Մարիամ Աւագեանին թշուառ վիճակում անյայտացել է 1882 ամի մայիսամսից մինչև ցայսօր։ Որովհետև Ռուսաստանի և Տաճկաստանի բոլոր Հայոց վիճակներում եղած խուզարկութիւնները և Սենատական

լրագրում՝ 1885 ամի յոգ՝ 761՝ յայտարարութիւնը ոչ մի հետևանք չեն ունեցել՝ և որովհետև արդէն ութ տարի անցել է այդ մարդու անյայտանալուց՝ ուստի Ս. Սինոդը վճռեց լուծուած համարել այդ ամուսինների պսակը և թոյլատրել կնոջը նորից ամուսնանալու։

—

16 Ապրիլի. Երևանի թեմի Բաշքեանդ գիւղի ծերունի և կոյր Աւետիս քահանայ Տէր Յովնանեանը՝ իւր գայթակղեցուցիչ վարուց համար՝ որոշմամբ Ս. Սինոդի՝ ուղարկուեց յապաշխարութիւն Սևանի վանքը՝ անորոշ ժամանակով։

—

16 Ապրիլի. Երևանի թեմի Նորաշէն գիւղի Աւետիս քահանան և նոյն մասի գործակալ քահանան ենթարկուում են 25 ական բուբլի տուգանքի և եռամեայ ապաշխարութեան եկեղեցու դրանը՝ կատարած լինելով առանց Ծայրագոյն Հոգևոր իշխանութեան թոյլտուութեան ազգակցութեան եօթներորդ աստիճանի պսակ։

—

20 Ապրիլի. 1880 թուի 30 յունիսի՝ Թիֆլիզի բնակիչ Նիկողայոս Գարասյեանցի պսակը Վարվառէ Եալուբեանցի հետ՝ ազգականութեան 6-րդ աստիճանում՝ անվաւեր էր համարուած մինչև ցայսօր և այդ ամուսինների զաւակները ապօրինի։ Տեղական վիճակաւոր Առաջնորդի միջնորդութեամբ և Վեհափառ Հայրապետի բարեհաճութեամբ՝ Ս. Սինոդը զիջանելով Նիկողայոս Գարասյեանցի աղերսանքին՝ բաւ համարելով նորա տասնամեայ տառապանքը ի խրատ և ի զգուշութիւն այլոց՝ վճռեց՝ վաւերական ճանաչել յիշեալ ամուսինների պսակը և այդ ամուսնութիւնից ծնուածներին օրինաւոր զաւակ։

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ։